Մարզպետ Համբարձում Մաթևոսյանի շնորհավորանքն Անկախության հռչակագրի ընդունման օրվա առթիվ

23.08.2021

Օգոստոսի 23-ը Հայաստանի անկախության հռչակագրի ընդունման օրն է: 1990 թվականի օգոստոսի 23-ին ՀԽՍՀ Գերագույն խորհուրդն ընդունեց 12 կետից բաղկացած Անկախության հռչակագիրը, որով դրվեց Հայաստանի անկախության գործընթացի սկիզբը:

Այն հիմնարար իրավական փաստաթուղթ դարձավ դեպի անկախություն տանող ճանապարհին՝ նախանշելով Հայաստանի քաղաքական, տնտեսական, մշակութային զարգացման ուղիները:

Հռչակագրի ընդունմամբ հայ ժողովուրդը ամրագրեց, որ արժանի է ու հաստատակամ ունենալ ավելի լավ ապագա, ստեղծել, կառուցել այն սեփական ձեռքերով, հոգու և մտքի ուժով:

Այս պատմական օրվա առթիվ շնորհավորում եմ բոլորիս՝ ցանկանալով մեծ ուժ ու նվիրում մեր Հայրենիքի հզորացմանն ուղղված բոլոր ձեռնարկներում: Աստված պահապան Հայոց աշխարհին ու հայ ժողովրդին: